



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1681-Ա/2

«04» սեպտեմբեր 2024 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 2368-Ա/2
ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ՆԱԽԱԳԾԵՐ 2024» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 13-ի N 370-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2024 թվականի օգոստոսի 30-ի նիստի արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 14-ի N 2368-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծեր 2024» մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորվող նախագծերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Նախագծերի ղեկավարների հետ կնքել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրեր:

3. Նախագծերի ֆինանսավորումը սկսել 2024 թվականի սեպտեմբերից:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝

Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՑԱՆԿ
«ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ 2024» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ

Ծածկագիր	Ղեկավար	Նախագծի վերնագիր	Կազմակերպություն	Ֆինանսավորման ծավալ (հազ. դրամ)
1 24FP-3B001	Ալեքսանյան Միքայել Սերյոժայի	Միաչափ և երկչափ նանոկառուցվածքների սինթեզումը և կիրառումը մթնոլորտում ջերմոցային գազեր հայտնաբերող թռչող դետեկտորներում	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	54000.0
2 24FP-1F030	Ալլահվերդյան Արմեն Էդուարդի	Քվանտային անալոգային հաշվարկներ և զգայուն չափումներ	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	54000.0
3 24FP-2F023	Աղայան Մարինա Աղասի	Մեզոմեխանիկական արհեստական մկանային համակարգերի եռաչափ տպագրություն՝ իոնային պոլիմեր-մետաղ կոմպոզիտներով և դիելեկտրական էլաստոմերով	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	54000.0
4 24FP-3B026	Այդինյան Սոֆիյա Վարդգեսի	2D բարձր-Էներգիայական մաքսեններ Էներգիայի կուտակիչներում կիրառության համար	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	54000.0
5 24FP-3A057	Բաբայան Նելլի Սամվելի	Կոմպլեքս 3D բջջային մոդելների ստեղծում՝ սֆերոիդների համատեղ կուլտիվացման և սֆերոիդ չիպի վրա տեխնոլոգիաների կիրառմամբ՝ երկարաժամկետ ազդեցությունները նմանակելու համար	«Քենդլ» սինթետիկային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ	54000.0
6 24FP-3D020	Թոչունյան Կարեն Արմենի	Սուրճի թափոններից երկրորդ սերնդի կենսավառելիքի ստացումը կիրառելով բնական և արհեստական մանրէաբանական համակեցություններ՝ ավելի կանաչ ապագայի համար	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	54000.0
7 24FP-1A058	Խաչատրյան Հրանտ Հարությունի	Լեզվական մոդելներ մոլեկուլների գեներացման համար	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	54000.0
8 24FP-2C017	Հակոբյան Աստղիկ Աշոտի	Վտանգի սահմանափակմամբ ռոբոտների շարժման կառավարումը դինամիկ միջավայրերում	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ	53722.0

9	24FP-1F039	Հակոբյան Տիգրան Ստեփանի	Համաչափությամբ պաշտպանված տոպոլոգիական փուլերի մոդելներ. եզրային վիճակների ֆիզիկան	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	54000.0
10	24FP-2A029	Հայրապետյան Դավիթ Բորիսի	Քվանտային կետերի վրա հիմնված կառուցվածքային լույսի միջոցով կառավարվող բազմաբյուրեղային ֆոտոնային սարքեր	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	54000.0
11	24FP-3B042	Հովհաննիսյան Աշխեն Արտաշեսի	Կենսածին նանոմասնիկների, բուսական ծագման ակտիվ միացությունների, դեղամիջոցների համակցված ազդեցության համակարգչային և կենսաբանական ուսումնասիրությունները	«Հայ-ռուսական համալսարան» ԲՄԿ ՊՈԻՀ	54000.0
12	24FP-4B036	Ղազարյան Աստղիկ Սամվելի	Հայաստանի քաղաքներում սինանտրոպ վայրի կաթնասունները որպես նոր հիվանդությունների հարուցիչների կրողներ	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	54000.0
13	24FP-4C013	Ղազարյան Կարեն Արամայիսի	Ցորենի, գարու և ձիթենու GreenTech մշակում. դրանց դիմադրողականությունը աղիության և երաշտի նկատմամբ՝ կենսածին նանոմասնիկների և կենսաածուխի համակցված կիրառման պայմաններում	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	54000.0
14	24FP-4B027	Մարգարյան Քրիստինե Սերյոժայի	Հայաստանի տեղածին խաղողի առաջին պատվաստված մոդելային կոլեկցիոն այգու հիմնադրում. արժեքավոր ռեզերվուար՝ Կանաչ գործարքի նպատակներին հասնելու համար	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	54000.0
15	24FP-4B025	Ներսեսյան Անուշ Անրիի	Հայաստանի խոլորձների (Orchidaceae) բազմազանության պաշտպանությունը ex situ և in situ պահպանության և բնակչության ներգրավման միջոցով	ՀՀ ԳԱԱ «Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	54000.0
16	24FP-2I061	Ներսիսյան Լիլիթ Ռոբերտի	Հակաբիոտիկների ազդեցությունից հետո միկրոբիոմային համայնքներում ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոփոխությունների վերծանում	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	54000.0
17	24FP-2J041	Պալոյան Անի Միշայի	Կենսապլաստիկի քայքայման նոր կենսատեխնոլոգիական գործընթացներ	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ	54000.0
18	24FP-1D009	Սահակյան Դավիթ Բագրատի	Ոչ գծային Կալմանի ֆիլտրի և Գաղտնի Մարկովյան մոդելների հետ կապված Էֆֆեկտիվ ալգորիթմերի լուծումը վիճակագրական ֆիզիկայի և Էվոլյուցիոն դինամիկայի մեթոդներով	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	54000.0
19	24FP-3B021	Սահարյան Արամ Ազատի	Տոպոլոգիայով, եզրերով և կորությամբ մակածված երևույթներ 2D նյութերում	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	52950.0
20	24FP-4C006	Տեփանոսյան Գևորգ Հովհաննեսի	Արարատյան դաշտի հողերի համապարփակ երկրաքիմիական բնութագրում. հազվագյուտ հողային տարրերի ներուժի բացահայտում խաղողի հետազոտության համար	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ	53994.0